№ 138 Սեպտեմբերի 27 Երեքշաբթի 1883 Սեպտեմբերի 27 Երեքշաբթի № 138

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Տուրգենեվի յուղարկաւորութիւնը։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գիւղական հարց։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՈՒՐԳԵՆԵՎԻ ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

„Новое Время“ լրագրի փարիզի թղթակիցները հեռագրում են սեպտեմբերի 19-ին, երկուշաբթի, հետևեալը։

Հիւսիսային երկաթուղու կայարանից Ի. Ս. Տուրգենեվի մարմինը ուղարկելուց առաջ, հոգեհանգիստ կատարվեցաւ հասարակութեան ահագին բազմութեան ներկայութեամբ։ Վրանը, որի մէջ դրած էր դագաղը, շինված էր սև մահուդից սպիտակ շղջանակներով։ Լուսաւորութիւնը փառաւոր էր. մոմերը վառվում էին արծաթէ աշտանակների մէջ։

Հոգեհանգստին ներկայ էին Անրի Մարտէն, Ժիւլ Սիմոն, տիկին Ադան և բազմաթիւ գրողներ։ Հոգեհանգիստը կատարելուց յետոյ, Էրնեստ Բրնան, հանգուցեալի բարեկամների կողմից, մի ճառ արտասանեց։

„Տուրգենեվ—ասեց նա—ամբողջ ցեղի մարմնաւորութիւն էր. նրա ճանաչողութիւնը անհատական չէր, այլ ժողովրդական։ Մէկ ամբողջ աշխարհ ապրում էր նրա մէջ, խօսում էր նրա շրթունքներով։ Դարևոր քնի մէջ ընկղմված ամբողջ սերունդներ նրա միջոցով կեանք էին առնում։ Մեծ պատիւ է պլաֆնական ցեղի համար, որ նա իր արտայայտիչ դառաւ այդպիսի կատարեալ արուեստագէտին։

Երբ որ ապագան կը ճանաչի պլաֆնական ցեղի զարմանալի հանճարը, Տուրգենեվի հեղինակութիւնները կը դառնան անգնահատելի դօկումենտներ, որոնք մեծ նշանակութիւն կունենան ոչ միայն պլաֆնների համար, այլ և ամբողջ մարդկութեան համար։“

Իր ճառի վերջաբանութեան մէջ դիմելով դագաղին, Բրնանը ասեց. „Երբ որ դու կը հանգստանաս հայրենի երկրում, թող նրանք, որոնք մեծ յարգանքով կը դան երկրպագելու քո գերեզմանին, համակրութիւններով յիշեն այն հեռաւոր երկիրը, ուր դու դառար այնքան սրտեր, որոնք իմացան քեզ հասկանալ և սիրել“։

Ապա խօսեց Էդմոն Աբու Ֆրանսիական գրողների կողմից։ „Ֆրանսիան, ասեց նա, պարծանքով քեզ իր որդի կանուանէր, եթէ դու այդ ցանկանայիր, բայց դու միշտ հաւատարիմ մնացիր Ռուսաստանին։ Եւ երանի քեզ, որովհետև ով չէ սիրում իր հայրենիքը անսահման, կոյր, խելագար կերպով, նա կիսով չափ միայն մարդ է։ Քո սիրտը պատկանում էր մարդկութեանը. բայց Ռուսաստանը առաջին տեղն էր բռնում քո զգացմունքների մէջ։ Սակայն քանի որ ձեր հարևան արևմտեան սահմանի վրա գտնվող պետութեան գործողները իրանց մահից յետոյ կունենան երկաթէ արձաններ, նեցուկ ունենալով դժբաղդ, բռնի կերպով միացրած, յաղթված և շղթայակապ կալանաւորներին,—շղթայի փոքրիկ կտորը քո սպիտակ մարմարեայ գերեզմանաքարի վրա ամենալաւ զարդարանքը կը լինի։“։

Բօգօլիւբով նկարագրեց մանաւանդ Տուրգենեվի գեղարուեստական տաղանդը և հրաւիրում էր նկարիչներին հետևել նրա օրինակին։

Դագաղի վրա երկու նոր պսակներ դրվեցան „Հարաւ-ռուսական մամուլի կողմից“ և „Փարիզի ռուս երիտասարդութեան“ կողմից։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 24 սեպտ.

Նորերումս մէկ երիտասարդ կամենալով Թիֆլիսից հեռանալ գործով դէպի ուրիշ քաղաք, ներկայանում է Թիֆլիսի հարկատուների վարչութիւնը (мѣщанская управа) և խնդրում է անցագիր։ Վարչութեան պաշտօնեայ պ. Գաբրիէլ Շահվերդեանը բաց է անում մատեանը և երկար ու բարակ հաշուելուց յետոյ առաջարկում է երիտասարդին վճարել իր վրա եղած 51 ր. 95 կ. ապառիկ հարկը և ստանալ անցագիրը։ Երիտասարդը զարմանալով այսպիսի առաջարկութեան վրա, պատասխանում է որ ապառիկ հարկերը Ռուսաց Կայսր Ալէքսանդր III-ի թագադրութեան հրովարտակով բաշխված են, ուրեմն մնում է վճարել միայն մի քանի բուբլիներ յօգուտ վարչութեան կասսայի, և ոչ թէ այդ խորհրդաւոր 51 ր. 95 կ. գումարը։ Զը նայելով, որ երիտասարդը պ. Գաբրիէլ Շահվերդեանին հասկացնում է իր խորհրդաւոր սխալը, բայց այս վերջինը դարձեալ պընդում է իր պահանջը։ Երիտասարդը տեսնելով որ Թիֆլիսից իր հեռանալը ուշանում է և այդ կարճ ժամանակում անկարելի է այդ անիրաւութեան դէմ բողոքել ուր հարկն է,—ճարահատված հեռանում է Թիֆլիսից առանց անցագրի, բայց իր հասած տեղը գործի պատճառով զգալով անցագրի կարևորութիւնը, հեռագրում է Թիֆլիս իր բարեկամներից մէկին, որ մի կերպով առնեն անցագիրը և ուղարկեն։ Երիտասարդի բարեկամը ներկայանում է հարկատուների վարչութիւնը և վճարելով 3 ր. 10 կ. առնում է անցագիրը և ուղարկում է իր տեղը։ Երիտասարդը վերադառնալով տեղեկանում է ի հարկէ բոլորը։ Այժմ զարթնում է այստեղ մի հետաքրքիր հարց. եթէ վարչութեան կասսային միայն 3 ր. 10 կ. էր պատկանում, ապա այն աւելորդ 48 ր. 85 կ. գումարը պ. Գ. Շահվերդեանը ո՞րտեղ էր ուղարկելու, չէ որ դանձարանը վաղուց բաշխել էր։ Մենք կասկածում ենք որ պ. Գ. Շահվերդեանը այնքան ազնիւ և իր պատուին նախանձախնդիր կը լինի, որ հրապարակով կը յայտնի այս հանելուկի գաղտնիքը։ Իսկ եթէ պ. Գ. Շահվերդեանը վիրաւորվելով կը կամենայ գործը յանձնել արդարադատութեան ատեանին,—իմ իսկական ազգանունը կարող է իմանալ «Մշակի» խմբագրութիւնից։

Կառնոս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ախալքալաք, 22 սեպտեմբերի

Ձեր լրագրի № 115-ի մէջ այստեղից գրված նամակի վերջին տողերը վերաբերվում են տեղիս ուսումնարանին, ուստի թոյլ տուէք մի քանի խօսք ասել այդ թղթակցութեան առթիւ։ Պ. Թղթակիցը, ի միջի այլոց, ասում է, որ «Ախալքալաքի ուսումնարանները շատ վատ, աննախանձելի և անհոգ դրութեան մէջ են գտնվում»։ Միայն պարոնը դժուարութիւն չէ կրում բացատրել՝ արդեօք ուսումնարանի նիւթական, բարոյական թէ ուսումնական կողմերն են այն դրութեան մէջ որ նկարագրում է ինքը։ Եթէ նորա խօսքը վերաբերվում է ուսումնարանի կիսափուլ դրութեան, ուսման համար կարևոր օժանդակ պիտոյքների չը լինելուն, մի խօսքով ուսումնարանի մնտեսական նեղ վիճակին, որի մէջ մեղաւոր չէ ուսումնարանի վարչութիւնը, այլ զանազան անյաջող հանգամանքներ,—այն ժամանակ նրա ասածը ուղիղ է և դրա մասին արդէն շատ խօսված ու շատ էլ գրված է։ Եթէ նրա խօսքերը վերաբերվում են ուսումնական մասին, այն ժամանակ կը խնդրէինք պ. Թղթակցին՝ հարցնել այն անձանց, որոնք ներկայ էին անցեալ ուսումնական տարվայ հարցաքննութիւններին—և նոցանից տեղեկանալ, որ ուսուցման հետևանքը բաւականացուցիչ էր—եթէ չասենք լաւ։ Ինչ կը վերաբերի մի հարբեցող ուսուցչի՝ թէ ես և թէ ուսուցիչները չեն ճանաչում մի այնպիսի ուսուցչի, որ հարբած գար ուսումնարան և դաս պարապէր։

Ի վերջոյ կը խնդրէինք պ. Թղթակցին, աւելի ուղղութեամբ վերաբերվել դէպի իրողութիւնները և անորոշ ու անզգոյշ գրուածքներով չարատաւորել ուսումնարանի անունը, մանաւանդ ի նկատի ունենալով որ հասարակութեան մեծամասնութիւնը միջոց չունի որոշել ուսումնարանի լաւ կամ վատ կողմերը, ուղիղն ու սխալը՝ և առանց այն միացնել և հաստատել մի ընդհանուր, պարտաւորեցուցիչ ապահովութիւն։ Դրա վճարը կարող էր շատ չնչին լինել՝ եթէ այդպիսի ապահովութիւնը մտցվէր ամբողջ կայսրութեան մէջ։ «Բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է որ՝ գիւղացու դոյքի և կեանքի ապահովութիւնը՝ իբրև պետական միջոց, չը պէտք է տրվեն չահախնդիրների ձեռքը, նա պէտք է մնայ նոյն իսկ հասարակութեան ու պետութեան և նոցա օրգանների անօրինութեան տակ» (էջ. 730)։ Գիւղացիների ապահովութեան հարցը ապահով ու հաստատ հիմքի վրա դնելով, գիւղական փոխատու արկղերը շատ օգտաւէտ և օժանդակիչ կը լինեն գիւղացու համար, և կապատեն նրան կարիքից, որ շատ անգամ չնչին գումարի, մինչև անգամ մի քանի բուբլու համար է յառաջացած լինում։ Բայց հարկաւոր է—ասում է յօդուածագիրը—որ՝ այդպիսի արկղերը յարմարցրած լինեն հողագործ ժողովրդի սովորութիւններին, նրա կենցաղավարութեանը։ Նշանակեալ միջոցին խստութեամբ պահանջելը, իւրաքանչիւր փոխատուութիւն գրաւականով ապահովացնելը, իր ժամանակին փողերը չը յանձնելու պատճառով, անյապաղ գիւղացու հողը ծախելը, մի խօսքով քաղաքային փոխատու արկղների բնաւորութիւնը պէտք է գիւղական այդ ձևի հիմնարկութեանց մէջ բաւականաչափ մեղմացրած լինեն և ժամանակաւորութիւնները (отсрочка) դիւրացվեն։ «Գիւղացին առ հասարակ լաւ վճարող է, նրա վրա պարտքը հազիւ է կորչում։ Սակայն վճարելու և պահանջելու առարական ձևի խիստ կանոնների գործադրութիւնը նրա մէջ, հեշտութեամբ կարող է աւերել նրա մնտեսութիւնը, և այդպիսի կանոններով գործող փոխատու արկղը դիւրութիւն չի տայ գիւղացուն, ալ կը շփոթեցնէ նրան (731)։

Պ. Կավէլին ցանկանում է որ՝ հողի արդիւնաբերութեան առևտուրն էլ աղատվի անկարգ հարստահարութիւնից և դրա համար միջոց է կարծում հոգատէրերի ընկերութիւնները, որոնք կանոնաւորին այդ առևտուրը։—«Մեր զեմսկի և հասարակական արկղները դատարկ են—ասում է նա—ապ թէ ոչ իբրև պալլիատիւ միջոց հարբստահարների յափշտակութեան դէմ, կարող էինք, օրինակ, շինական հացի պահեստներին կից հացի տեսեստներ հաստատել, որոնք էժան ժամանակ ստանային գիւղացու հացը իբրև գրաւական՝ և դրա փոխարէն դրամական փոխատուութիւն անէին նրան, որպէս զի նա կարողանայ հացը ծախել այն ժամանակ՝ երբ վաճառանում կանոնաւոր դները կը հաստատվեն։ Հացատէը կը վճարէր մի չափաւոր գումար, հացը պահելու և փոխատուութեան տոկոսի փոխարէն 731—732)։ Պ. Կավէլինի այս առաջարկութիւն, կարծեմ բաւականի նման է պ. Ց. Ամիրազեանի առաջարկած ասոցիական ընկերութեանը (:Մշակ» 1883 № 84)։

Վերջապէս՝ գիւղացոց կարող էին օգնել, պ. յօդուածագրի կարծիքով՝ այն փոքր դրամատէրերը, որոնք աղ են վնտռում չափաւոր տոկոսով իրանց փողերը զետեղելու համար։ Այդպիսի մարդիկ կարող էին իրանցից հիմնել հացի պահեստներ և երբ որ դրա գինը ցածր է, առնէին գիւղացիներից հացը և նրա փոխարէն վճարէին փող՝ վաճառանոցի գնով, և երբ հացը կը թանգանար՝ ծախէին դրան յօգուտ գիւղացիների, ստանալով նրանցից չափաւոր կոմիսիա։ Իսկ գիւղացիք այն օգուտը կունենային, որ չէին շտապի ծախել հացը, այլ կը սպասէին լաւ գների։ Բայց որպէս զի երկու կողմերն էլ օգուտ ունենային այդպիսի ձեռնարկութիւնից՝ ի հարկէ բացի դրամագլխից, հարկաւոր է բնրեխղճութիւն, բարեկարգութիւն, հարկաւոր է որ՝ գիւղացիները հաւատ ընծայէին դրամատէրին, իսկ այդպիսի պայմանները միասին չեն լինում միացած մի անձի մէջ։ «Մի և նոյն ժամանակ հազիւ կը գտնվեն մեզանում հանրօգուտ գործին ծառայելու համար իրանց նուիրող անձինք։ Մեծամասնութիւնը աւելի լաւ է հաշուում բուբլու փոխարէն մի բուբլի չահ ստանալ, առանց մտածելու այլոց—մանաւանդ գիւղացոց—չահերի վրա։

—

VII.

Այն ժամանակից սկսած—ասում է պ. Կավէլին,—երբ ուշադրութիւն դարձվեցաւ գիւղական հարցի վրա, գիւղացու կեցութեան ընկնելու պատճառներից մէկին էլ համարում են՝—գիւղական վարչութեան անկարգութիւնները։

Այդ բոլորի հետևանքն է յաճախակի չփոթութիւն նոցա կառավարելու մէջ» (№ 11 էջ. 89)։ Շատերը հակառակ լինելով ինքնավար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՐՑ

—

Շարունակելով խօսել գիւղացու դրութեան բարելաւման մասին, պ. Կավէլին անհրաժեշտ է համարում ընդունել մի շարք այնպիսի միջոցների, գիւղացոց մնտեսութիւնը այն անթիւ պատահարներից ազատելու, որոնք անակնկալի կերպով խանգարում են նորա մնտեսութիւնը՝ ինչպէս են հրդեհը, անպտղաբերութիւնը, կարկտահարութիւնը, մրրիկները ու անասունների ջարդերը, վարակիչ և այլ հիւանդութիւնները և այլն, մանաւանդ երբ նոքա տեղական են և զրկում են մարդուն՝ աշխատելու կարողութիւնից։ Այդպիսի դժբաղդութիւնների ժամանակ, անօգնական գիւղացին վնասվում է և դա աւելի վատ է ազդում նրա վրա, քան այն ձախորդութիւնը՝ որին ենթարկվել էր նա։ Յօդուածագիրը ասում է թէ եղել են դէպքեր, որ այդպիսի ձախորդ պատահարներից յետոյ, հարուստը աղքատանալով՝ անձնասպանութիւն էր գործել, որ ազնիւ ու բարեբարոյ մի մարդ, կարիքից ստիպված, գողութեան էր դիմել։

Այդպիսի վնասակար պատահարների դէմ կայ մի փրկարար, ուղիղ միջոց—դա ապահովութեան ընդարձակ զարգացումն է։ Պ. Կավէլինի ասելով՝ հարկաւոր է ապահովութեան զանազան ձևերը տարական ձևի խիստ կանոնների գործադրութիւնը նրա մէջ, հեշտութեամբ կարող է աւերել նրա մնտեսութիւնը, և այդպիսի կանոններով գործող փոխատու արկղը դիւրութիւն չի տայ գիւղացուն, ալ կը շփոթեցնէ նրան (731)։

Պ. Կավէլին ցանկանում է որ՝ հողի արդիւնաբերութեան առևտուրն էլ աղատվի անկարգ հարստահարութիւնից և դրա համար միջոց է կարծում հոգատէրերի ընկերութիւնները, որոնք կանոնաւորին այդ առևտուրը։—«Մեր զեմսկի և հասարակական արկղները դատարկ են—ասում է նա—ապ թէ ոչ իբրև պալլիատիւ միջոց հարբստահարների յափշտակութեան դէմ, կարող էինք, օրինակ, շինական հացի պահեստներին կից հացի տեսեստներ հաստատել, որոնք էժան ժամանակ ստանային գիւղացու հացը իբրև գրաւական՝ և դրա փոխարէն դրամական փոխատուութիւն անէին նրան, որպէս զի նա կարողանայ հացը ծախել այն ժամանակ՝ երբ վաճառանում կանոնաւոր դները կը հաստատվեն։ Հացատէը կը վճարէր մի չափաւոր գումար, հացը պահելու և փոխատուութեան տոկոսի փոխարէն 731—732)։ Պ. Կավէլինի այս առաջարկութիւն, կարծեմ բաւականի նման է պ. Ց. Ամիրազեանի առաջարկած ասոցիական ընկերութեանը (:Մշակ» 1883 № 84)։

Վերջապէս՝ գիւղացոց կարող էին օգնել, պ. յօդուածագրի կարծիքով՝ այն փոքր դրամատէրերը, որոնք աղ են վնտռում չափաւոր տոկոսով իրանց փողերը զետեղելու համար։ Այդպիսի մար-

էլ հրաշքներ է սպասում ուսումնարանից։

Տեսուչ Ախալքալաքի երկսեռ ուսումնարանաց հայոց՝ Յովհաննէս քահանայ Քաջազնունի

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Սեպտեմբերի 25-ին, կիրակի օր Թիֆլիսը ընդունում էր երկրիս նախկին փոխարքայ, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչին։ Քաղաքը տօն օրվայ տեսք ստացաւ, փողոցները զարդարված էին դրօշակներով։ Երկաթուղու կայարանում Մեծ Իշխանին դիմաւորեցին քաղաքի պատգամաւորութիւնները, դուման, քաղաքագլխով, վաճառականների, արհեստաւորների և մեչչանների ուպրավները իրանց գլխաւորներով։ Քաղաքագլուխը աղ ու հաց ներկայացրեց Նորին Բարձրութեանը և մի ճառ ասեց։ Մեծ Իշխանը պատասխանեց մի քանի խօսքով, յայտնելով իր սէրը դէպի Թիֆլիս քաղաքը։ Կայարանից Նորին Բարձրութիւնը գնաց Դիղոմի դաշտը, որտեղ զօրահանդէս եղաւ, այնուհետև այցելեց Սիօնի մայր-եկեղեցին և օրիորդական ինստիտուտը։ Նոյն օրը Մեծ Իշխանը թողեց Թիֆլիս, ուղևորվելով դէպի մայրաքաղաք։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են։ «Տուրգենևվի թաղման հանդիսի համար պատրաստված պըսակների թիւը 400-ից անց է արդէն։ Ամեն մի պսակի մօտ իրաւունք կայ պատգամաւորութիւն ունենալ 6 հոգուց բաղկացած, այնպէս որ պատգամաւորների թիւը այժմ հասնում է արդէն 2400 հոգու, թերևս աւելի կը լինի։ Նէվսկի փողոցի գլխաւոր ծաղկավաճառ խանութները զարդարված են պսակներով։ Ամենամեծ կովկասեան մագազիններից մէկում երևում է մի գեղեցկատես և ճաշակով ընտրած ճենապակեայ (фарфоровый) պսակ «Մշակ» լրագրի խմբագրութիւնից։ Պսակադաշտը պատած է սև մախմուրով, որի վրա արծաթեայ տառերով գրած է ռուսերէն լեզուով. «Մեծ հեղինակին», իսկ ժապաւէնների վրա. «Հայոց Մշակ լրագրից»։ Պսակի ընդհանուր տեսքը այնքան սիրուն է, որ գրաւում է անցուդարձ անողների ամենքի ուշադրութիւնը։ Թաղման հանդիսի ժամանակ ձեր պսակը, բացի պ. Գասպարիսի ժամանակ ձեր պսակը, բացի պ. Գասպարիսի ժամանակ ձեր պսակը, բացի Եաղուբեանից, կը տանեն 6 հոգի ձեզ համակրող հայ ուսանողներից։»

—

Լսում ենք, որ Թիֆլիսի Գայեանեան օրիորդական դպրոցի տեսչի պաշտօնի վրա ընտրվել է պ. Սեդրակ Արարատեան։

—

Մեզ գրում են ԴԻԼԻՋԱՆԻՑ հետևեալը։ Երևելի աւազակապետ Թանդրի-Վերդին ազդարարութիւններ է անում հրապարակապէս, կանչելով մարդկանց և հրաւիրելով նրանց իր խմբի հետ միանալու։ Եւ ճշմարիտ է, նրա մօտ դիմում են, ինչպէս լսում ենք, քրէական քննութիւնից խոյս տուող յանցաւորները։ Երկրորդ աւազակապետը Ալին օրը ցերեկով յարձակվում է գիւղերի վրա, թալանում է բնակիչներին, քար ու քանդ անում տները։ Այս օրերս լսեցինք որ նրա ընկեր Մանջան-Օղլին պատահաբար սպանված է. տայ Աստուած որ ուղիղ լինի այդ լուրը։ Բացի աւազակներից տեղական բնակիչ թուրքերն էլ անկարգութիւններ են անում. մէկ մէկու կոտորելը սովորական բան է դարձել նրանց մէջ։

—

Պ. Ժիլ Մուրիէ, որ առաջ ուսուցիչ էր Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչի երեխաների, ըսկսեց հրատարակել Օդէսայում Կովկասի մասին շատ հետաքրքիր և օգտաւէտ գրքեր։ Գրքերից մինը կրում է «La Mingrélie» (Մինգրելիա) վերնագիրը և պարունակում է իր մէջ Մինգրէլիայի հնութիւնների, նրա բնակիչների բարք ու վարքի նկարագիրը, նաև այդ երկրի պատմութիւնը և նրա աւանդութիւնները։ Գիրքը պատկերազարդ է։ Միւս գիրքը կրում է «L'art au Caucase» (Արուեստը Կովկասում) վերնագիրը և պարունակում է Կովկասեան երկրի ամեն մասերի հնութիւնների, հին և նոր, աշխարհական և եկեղեցական արուեստի, ճարտարապետութեան նկարագիրը։ Այդ գիրքը նոյնպէս պատկերազարդ է։ Երկու գրքերն էլ, ի հարկէ, ֆրանսերէն են գրված։ Հրատարակութիւնը առհասարակ շատ խնամված է. թուղթը ընտիր է, պատկերները գեղեցիկ են և ճիշդ կերպով են կատարված։ Պէտք է խոստովանել որ Կովկասին վերաբերեալ հրատարակութիւնների մէջ մեզ շատ քիչ է պատահել տեսնել այդքան բարեխիղճ կերպով կազմած հրատարակութիւններ։ Անշուշտ պ. Մուրիէ իր գրքերով մի խոշոր լումա է գցում գիտութեան գանձարանի մէջ, բաւական նպաստում է Կովկասի հետազօտութեան գործի կանոնաւոր առաջադիմութեանը։ Պարոնի գրքերի մասին յայտարարութիւնները տպված են ֆրանսիական լեզուով «Մշակի» ներկայ համարի վերջին երեսի վրա։

—

Պ. Աբէլ Ապրէսեանց խնդրում է մեզ յայտնել հետևեալը։ «Դաւիթ-բէկ» գրքի առաջին հատորը ամեն տեղ սպառված է, իսկ ինձ մօտ աւելորդ 3 օրինակ կայ նրանից։ Եթէ Թիֆլիսում ցանկացողներ կան այդ գիրքն առնելու, նրանք կարող են դիմել ինձ այս հասցէով. Կաթօլիչեսկայա փողոց, Աստուածատրեանց և ընկ. պահեստի կօնտորայում. բայց ուրիշ քաղաքներից խնդրում եմ չը դիմել ինձ։»

—

Երբ կիրքը կուրացնում է մարդկանց, նրանք այնպէս են սկսում խօսել կամ գրել որ ոչ իրանք են հասկանում իրանց ասածն ու գրածը, ոչ էլ ուրիշները։ Այդպէս էլ պատահել է Պետրոս Սիմէօնեանցի հետ։ Նրա վերջին պատասխանը «Մեղուի» մէջ ինտելիգենցիայի մասին, ոչ ինքն է հասկանում, ոչ էլ հնար կայ ուրիշի համար հասկանալու նրա ասածները։ Հետզհետէ Սիմէօնեանցի և նրա կուսակցութեան մարդկանց գրուածները սկսում են նմանվել հաշիշ խմած մարդկանց ասածներին։ Նրանք այլ ևս չեն խօսում կամ գրում, այլ դէլ են տալիս։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Տէր-Մովսէսովի բրօշիւրը ռուսերէն լեզուով հիւսիսային Ռուսաստանի կաթնային տնտեսութեան մասին, հետևեալ վերնագրով. առաջին մաս. «Краткій очеркъ молочнаго дѣла по Сѣверной Двинѣ» և երկրորդ մաս. «Замѣтки по холмогорскому скотоводству.» Ամբողջ բրօշիւրը կրում է հետևեալ վերնագիրը. «Отчетъ командированнаго отъ Общ. на Сѣверъ Россіи д. чл. І. В. Теръ-Мосесова».

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վարնայից գրում են «Daily News»-ը լրագրին որ Գլադստոնի տեսակցութիւնը ռուսաց Կայսրի հետ մեծ տպաւորութիւն գործեց Կ. Պոլսի մէջ։ Պաշտօնական թիւրքաց լրագիրներին կառավարութիւնը անմիջապէս հրաւիրեց չը յարձակվել այլ ևս Անգլիայի դէմ։ Սուլէյման-բէյ ուղևորվեց Բերլին։ Կարծում են որ նրան յանձնված կը լինի Բիսմարկ իշխանից վերջնական պատասխան ստանալու թիւրքիայի առաջարկութեան մասին միանալու եւրօպական կենտրոնական դաշնակցութեան հետ։

—«Independance Belge» լրագրին սեպտեմբերի 14-ից գրում են հետևեալը։ «Անգլիան ըստ ուրեւոյթին պատրաստ է խստութեամբ վարվել Բ. Դրան հետ։ Այն հանգամանքը որ վերջինս ամեն կերպ յետաձգում է բարենորոգումների իրագործելը թիւրքաց-Հայաստանում և այժմ իսկ չէ ընդունում անգլո-թիւրքական դաշնակցութիւնը, ձանձրացրել են անգլիական կառավարութիւնը։ Ինչպէս «Standart» լրագրի թղթակիցը հաղորդում է, լորդ Դիւֆերինի Կ. Պոլիս ժամանելուն պէս, Սալօնիկում գտնված անգլիական զինուորական նաւերը հրաման են ստացած Կ. Պոլսին մօտենալու, որպէս զի իրանց ներկայութեամբ ոյժ տան դեսպանի պահանջներին։»

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են որ հեռագիր ստանալուն պէս թէ լորդ Դիւֆերին Կ. Պոլիս կը վերադառնայ, սուլթանը անմիջապէս հրամայեց իր մինիստրներին նորից զբաղվել հայկական խնդրով և պատրաստել թիւրքաց-Հայաստանում բարենորոգումներ մտցնելու ծրագիրը։ Ասում են որ այն նահանգներում, ուր ազգաբնակութեան մեծամասնութիւնը քրիստոնեաներ են, քրիստոնեայ նահանգապետներ կը նշանակվեն։

—«Pol. Corresp.» լրագրին Կ. Պոլսից, սեպտեմբերի 11-ից գրում են հետևեալը։ Գլադստոնի կօպէնհագէն գնալու վրա այստեղ նայում են, որպէս քաղաքական նշանաւոր անցքի վրա, որը յոդուածագիրը ասում է որ՝ «վարչութեան պաշտօնական անձանց՝ գիւղացւոց կառավարութեան գործին շատ մասնակցելը, գիւղական գործերի վրա շատ ազդեցութիւն գործելը, գլխաւորապէս յառաջացնում են նշանաւոր անարդարութիւններ և չարագործութիւններ (злоупотребленя), որոնք շատ անգամ քանդում են գիւղացոց։

«Բայց ամենքը այդպէս չեն,—ասում է պ. Կավէլին — այլ շատերը նոցանից ազնիւ մարդիկ են»։ Գիւղական հարցը յարձրանալից յետէ, Ռուսաստանում բազմաթիւ մարդիկ խորհում են գիւղացոց կառավարելու ձևը բարւոքել։ Վերջին ժամանակներս անաւանդ, շատ են խօսում համադասակարգայ (всесословный) համայնքներ (волость) կազմելու համար։ Թէև մեզանում այդպիսի որմնաձութեան մասին լուր անգամ չը կայ, այնուամենայնիւ աւելորդ չէ կարծեմ բաւարել թէ ինչ է համադասակարգեալ համայնքը։ Մի որոշեալ տարածութեան վրա բնակվող մարդիկ, որ կոչման, որ դասակարգի կամ հասարակական դիրքի էլ պատկանեին նոքա, կազմում են մի համայնք և գործակցում են դրա կառավարութեան գործին։ Այդ միջոցով կամենում են մրցընել գիւղացոց մէջ՝ լոյս, քաղաքական ու հասարակական մտքեր, հասարակական գործերը վարելու սովորութիւն և այլն։ Իսկ այլոց ցանկութիւնն էր—ասում է պ. Կավէլին—այդ միջոցով ձեռք առնել գիւղական գործերը։ Արտաքին, կաշառքի և անտեսական ճնշման միջոցով՝ կալուածատէրը, վաշխառուն, գինեվաճառը և հարբստահարող վաճառականը հեշտութեամբ կարող էին տանուտէր, իւղբաշի դառնալ և օրէնքի ծածկոյթի տակ իրանց գործերը կարգի դնել։ Եթէ մէկը ընդդիմանար նոցա բռնաբարութեանն ու յափշտակութեանը, նոքա կարող էին տալ դրան իշխանութեանը չը հնազանդվելու և նրա կարգադրութիւններին ընդդիմանալու կերպարանք։ Եթէ գիւղացու աղքատութեան, տգիտութեան և ժառանգական հլութեան պատճառով, գիւղական տանուտէրերը ինչ ասես անում են նոցա մէջ, ապա ինչ կանէին նոցանից աւելի փորձված, կրթված ու ազդեցութիւն ունեցող մարդիկ։ Այժմեան չինն. հասարակութիւնների վարչութիւնը երկու պաշտօն ունի. այն է՝ պետական գործոց և գիւղական—ներքին գործոց վարելը։ Գիւղական տանուտէրերը ծանրաբեռնված են գործով, նոքա պէտք է հսկեն և՛ կարգապահութեան և՛ առողջապահութեան, ակցիզային կանոնների և այլ բաների վրա, որ ի հարկէ հեշտ չէ, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք տանուտէրերի տգիտութիւնը և գործին անտեղեակ լինելը։ Պ. Կավէլին առաջարկում է՝ բաժանել և այդ պարտականութիւնների մի մասը վերացնելով յանձնել տեղական ընդհանուր վարչութեանը, իսկ մի մասը՝ թողնել գիւղացիների վարչութեան տակ։ Այդ առաջարկութեան համեմատ, տեղական ընդհանուր վարչութեանը պէտք է յանձնել՝ ժողովրդական լուսաւորութեան գործը, առողջապահութեան վերահսկողութիւնը, հաղորդ. ճանապարհների, հրդեհի, լինելի ընդհարումների ժամանակ պետութիւնների նոր համախմբութիւններ պէտք է կազմի։ Որքան էլ չափազանցրած լինի այդ հայացքը, այնուամենայնիւ, դա առիթ տուեց օսմանեան կառավարութեանը կրկին հաւատացնել գերմանական և աւստրօ-ունգարական դեսպանութիւններին այն բանում, որ Թիւրքիան, նախ և առաջ, Գերմանիայի, Աւստրօ-Ունգարիայի և Իտալիայի դաշնակցութիւնը համարում է խաղաղութեան գրաւական և իր սեփական ապահովութիւնը գտնում է վերոյիշեալ դաշնակցութեան հետ միանալու մէջ. այդ զգացմունքները նոյնպէս արտայայտեց սուլթանը պ. պ. Բաղովիցի և բարոն Կալիչէի հետ տեսակցութեան ժամանակ։ Միւս կողմից, դէպի Անգլիան ունեցած կասկածը մեծացաւ, որովհետև այստեղ կարծում են, որ Անգլիայի և Ռուսաստանի մէջ համաձայնութիւն է կայացել արևելեան խնդրի վերաբերութեամբ։ Անգլիական շրջաններում այդ կասկածը բոլորովին սխալ է համարվում և դրանով մատնացոյց են անում այն բանի վրա, որ եթէ իրաւ, ռուսաց Կայսրի և Գլադստոնի տեսակցութեան ժամանակ խօսք է բացվել քաղաքականութեան մասին, անգլիական առաջին մինիստրը շատ հաւանական է, որ աչխատում էր համոզել Ռուսաստանը՝ յետ կանգնել պատերազմական քաղաքականութիւնից (?!)։ Բ. Դրանը համոզելու համար, որ գերմանական կառավարութիւնը բաժանում է այդ հայեացքը, գերմանական դեսպան պ. Բաղովից խնդրեց նրան յետաձգել մի քանի հարցերը մինչև լորդ Դիւֆերինի վերադարձը, որովհետև Գերմանիան Անգլիայի հետ համաձայնութիւնը խաղաղութեան համար էական պայման է համարում արևելքում։»

—Ֆրանսիական պատգամաւորների ժողովի նախագահ պ. Բրիսսոնի օրգան «Siècle» լրագիրը հետևեալ խորհրդածութիւններ է անում Կօպէնհագէնի տեսակցութեան առիթով։ «Գլադստոն արդէն իր կրօնական զաղափարների հիման վրա Ռուսաստանի բարեկամ է։ Բիսմարկը, հաւանական է, որ նոյն վիճակի կենթարկվի, ինչ վիճակին որ ենթարկվեցաւ Աւստրիան XVII, իսկ Նապոլէօն I-ը XIX-դ դարի սկզբում։ Խաղաղութիւնը պահպանելու պատրուակով, նա Եւրոպայի սրտում դաշնակցութիւն է կազմում, մի սարսափելի ոյժ, որը իսկապէս մի սպառնալիք է, որովհետև այդ ոյժը համապատասխան չէ այն վտանգին, որի առաջը նա կամենում է առնել։ Հինգ պետութիւններ դաշն են կապում պաշտպանելու իրանց մէկ պետութեան դէմ, և նրանք կարծում են հանդստացնել աշխարհը։ Ով խաղաղասէր ղեկաւորութիւն ունի, նա պահանջ չէ զգում զօրեղ և թեով գերազանց լինել, նա չէ տալիս այնպիսի զոռոզ և մեծասիրտ յօդուածներ, որպէս «Nordd. Allg. Zeitung» լրագիրը Այդ պատճառով Բիսմարկ մէկ հոգս ունի՝ դաշնակցութիւններ կապել Եւրոպայի կենտրոնում։ Բայց այդ դաշնակցութիւնների փոխարէն նա պէտք է հաղորդ ընդարձակման խոստումներ տայ, որովհետև այդ դաշնակցութիւնները՝ ասում են «ինչ ինքնավարչութիւն հնարաւոր է անգրագէտ, անուս, և կիսավայրենի գիւղացիների մէջ։ Մի վեղրо արաղի համար, նոքա ում ասես կընտրեն, ինչ վճիռ կամենաք կը կայացնեն, արդարին կը մեղաւորցնեն, իսկ մեղաւորին կարդարացնեն։ Մթթէ նոքա գտնէ ամեն

հետև դրանք—դաշնակցութիւնները—արուեստական են: Նապոլէոն I-ը շատ զօրեղ էր 1812 թվին. նա շատ դաշնակիցներ ունէր: Նա դաշնակից էր Սպանիայի, Նէապոլի, Սակսոնիայի և Բավարիայի հետ: Ինչ մնաց այդ դաշնակցութիւններից 1814 թվին: Ակնյայտնի է, որ կոպէնհագենան տեսակցութիւնը հետևանք է այն երկիւղների, որ պատճառում է ամբողջ Եւրոպայում Գերմանիայի գեղեմոնիան և նրա քաղաքականութիւնը, որ սպառնում է եւրոպական խաղաղութեանը: Իսկապէս, չը կայ մի դաշնակցութիւն, որ ծառայէր որպէս հակակշիռ ոյժ, այլ բարեկամութեան ձգտում կայ Անգլիայի, Ռուսաստանի և սկանդինավեան պետութիւնների մէջ, որոնք նախանձախնդիր են եւրոպական հաւասարակշռութեան պահպանելուն: Հակակշռող-դաշնակցութիւն չը կայ, որովհետև դա բոլորովին անօգուտ է: Ընդհանուր վտանգի դէմ պաշտպանվելու պահանջ զգող մարդիկը կարիք չունեն դաւոր դաշնագիրներ կապելու:

—Բոլգարական գործերի մասին Ս. Պետերբուրգից գրում են «Nordd. Allg. Zeitg.» լրագրին հետևեալը: «Journal de St.-Petersbourg» լրագրի յօդուածը Բոլգարիայի մասին, ինչպէս մեզ հաղորդում են, ճնշումն գործեց Բերլինի Բօրսայի վրա: Այստեղ այդ յօդուածի մէջ ոչինչ չեն գտնում, որ կարողանար արդարացնել այդպիսի արպաւորութիւնը: Ռուսաց քաղաքականութիւնը Բոլգարիայի վերաբերութեամբ ունեցել է և միշտ կունենայ խաղաղ բնաւորութիւն: Այն միջոցը, որով իշխան Ալէքսանդր հրատարակեց օգոստոսի 30-ի շրջաբերականը և վերականգնեց սահմանադրութիւնը, որ նա միշտ անգործադրելի էր անուանում, այստեղ ծանր տպաւորութիւն գործեց: Հասկանալի է, որ Ռուսաստանը պէտք է հերքէր իր համախոհութիւնը մի այնպիսի գործին, որ կարող է նշանաւոր հետևանքներ ունենալ բոլգարական իշխանի և երկրի համար: Այնու ամենայնիւ դրանից առաջացած լուրերը, իբր թէ Ռուսաստանը զանազան կանդիդատներ ունի բոլգարական գահի համար, կատարելապէս հնարված են: Ռուսաստանը ցանկանում է, որ Բոլգարիայի մէջ հանգստութիւն և խաղաղութիւն տիրէ, և ոչ թէ նրան ներքին և արտաքին դժուարութիւնների կենտրոն դարձնել: Ռուսաստանի համար հաճելի կը լինէր, եթէ իշխան Ալէքսանդր իրագործէր մի անգամ որոշված նախագծի կէտերը: Բայց որովհետև այդպէս չեղաւ, Ռուսաստանը պարտաւոր էր հեռացնել իրանից ամեն տեսակ պատասխանատուութիւն և ցոյց տալ իշխան Ալէքսանդրին նոր ճանապարհի վտանգները: Եթէ Սոֆիայի կառավարչական անձինք կը կարողանան դժուարութիւնների առաջն առնել, ռուսաց կառավարութիւնը ուրախութեամբ կը խոստովանի, որ իր երկիւղը ի զուր է եղել:

—«Temps» լրագիրը գրում է. Այն անաբականութիւնը և վիշտը, որ պաճառեցին բարեմիտ քաղաքացիներին փողոցային ցոյցերը սպանիական թագաւորի Փարիզ գալու ժամանակ, պէտք է առիթ չը տան այդ ցաւալի անցքը չափազանցացնելու համար: Անկարգութիւններ գործող մի քանի հազար մարդիկ նոյն անձինք են, որոնք շուացնում են հասարակական ժողովների ժամանակ և որոնք Թիերի ու Գամբետտայի հետ նոյնպէս էին վարվում, ինչպէս այժմ վարվեցան սպանական թագաւորի հետ: Նրանք նոյնքան քիչ են յարգում Ֆրանսիայի արժանաւորութիւնը և շահերը, որքան և օտար ազգերի պատիւը: Ֆրանսիան անկասկած պէտք է պատասխանատու լինի այդպիսի անկարգութիւնների համար, բայց օտար ազգերը և մանաւանդ Սպանիան այնքան իրաւացի կը լինեն, որ մի քանի անմիտների մոլորութիւնները ամբողջ ազգութեան տրամադրութիւն չեն համարի:

—Ֆրանսիական հանրապետութեան նախագահը Ֆրանսիայի անունով ներողութիւն խնդրեց սպանական թագաւորից պատահած փողոցային ցոյցի համար, բացատրելով, թէ նրան մասնակցողներին չը պէտք է կցորդել Ֆրանսիային: Մի և նոյն ժամանակ Գրէվի խնդրեց թագաւորից ապացուցանել իր համակրութիւնը, ընդունելով ճաշկերոյթի հրաւէրը Ելիսեան պալատի մէջ, որին ներկայ կը լինեն Ֆրանսիական կառավարութեան բոլոր անդամները և որի ժամանակ թագաւորը կը նկատէ Ֆրանսիայի իսկական զգացումները: Սպանիական թագաւորը պատասխանեց, որ նա Ֆրանսիային բարեկամ է և, Փարիզ գանվելով, ուրախութեամբ ընդունում է այդ հրաւէրը իր զգացմունքները յայտնելու համար: Այդ ճաշկերոյթի ժամանակ Գրէվի և Ֆրանսիական մինիստրները կրում էին սպանիական շքանշաններ: Թագաւորը երկար խօսում էր արտաքին գործերի մինիստրի հետ: Գրէվի խնդրեց թագաւորից դարձեալ մի օր մնալ Փարիզի մէջ:

—Մեցի պատգամաւոր Անտուանի նամակների հրատարակիչը և «Nord Allg. Zeitg.» լրագրի դատողութիւնները նրանց մասին առիթ տուին «République Française» լրագրին մի հանդգոյ պատասխան տալ: Գամբետտիստների գլխաւոր լրագիրը բողոքում է այն մեղադրանքի դէմ, իբր թէ Ֆրանսիայի մէջ մի ընկերութիւն կայ, որ աշխատում է պատերազմ յարուցանել: Ոչ մի կուսակցութիւն պատերազմ չէ ցանկանում, բայց ամենքը պատրաստ են զոհաբերութիւններ անել, եթէ պատիւը կը պահանջէ: Անպատուութիւն է բերում այն պահանջը, որ Ֆրանսիան չը համակրէ Էլզասին: «Nordd. Allg. Zeitg.» լրագրի նպատակն է ճնշումն գործել Բայխստագի վրա: Աւֆոնս թագաւորը միայն անտարբեր գործիք է Ֆրանսիային քաղաքավարութեամբ վերաբերելու համար: Այդպիսի յարձակմունքները բաղդաւորապէս նպատակի չեն հասնում, բայց դրա պատճառը երկիւղը չէ:

—«Indipendente» լրագրի խմբագիրը կալանաւորված է Տրիեստի մէջ: Այդ կալանաւորութիւնը տեղի ունեցաւ նրա տան մէջ կատարված խուզարկութիւնից յետոյ մի նշանաւոր յօդուածի առիթով:

—Բոլոր պետութիւնները, բացի Բ. Դռնից, հաստատեցին Լօնդոնի կօնֆերենցիայի վճիռները Դանուբի հարցի մասին: Վաւերացման ժամանակը լրացաւ սեպտեմբերի 10-ին: Սպասում են, որ շուտով Բ. Դուռը կը հետևի միւս պետութիւնների օրինակին:

—Ալէքսանդրիայից «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են, որ այնտեղ յոյս ունեն, թէ անգլիական զօրքերը յետ կը կանչվեն աշնան վերջը: Ալէքսանդրիայի մէջ մշտապէս կը մնան 3000 անգլիական զինուորներ և մի բատալիոն էլ Կայիրէ կուղարկվի: Իրանք եւրոպացիները դատապարտում են մահուան այն դատավճիռները, որոնց կայացնում են զինուորական դատարանները վերջին ապստամբութեանը մասնակցողների համար: Ամենքն միաձայն ասում են, որ Ալէքսանդրիայի ջարդի վրէժը բաւական առնված է և որ ժամանակ է անցեալը մոռացութեան տալ:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մարդկութեան դաւանութիւնները: Կաթոլիկական միսիան Լիոնում այս օրերս հրատարակեց երկրագնդիս վրա սփռված միլիոնաւոր մարդկանց դաւանութիւնների ստատիստիկա: Այդ ստատիստիկայից երևում է, որ ներկայ ժամանակում գոյութիւն ունեն 627,000,000 մոնոթէիստներ և 816,000,000 կռապաշտներ: Կաթոլիկ կրօնին պատկանում են 212,000,000 մարդիկ, բողոքականներ—124,000,000, այլ քրիստոնեայք— 84,000,000. իսրայէլացիք 7,000,000. մահմեդականներ—200,000,000, բրամիններ — 163,000,000. բուդդայականներ աղանդաւորների հետ միասին — 423,000,000 և հեթանոսներ 330,000,000: Հետևաբար, քրիստոնեայ ժողովուրդների թիւը ընդամենը 420,000,000 է և ճշմարիտ Աստծուն երկրպագողները երկրագնդի բնակիչների կէս թիւն անգամ չեն կազմում, այլ 828,000,000 մարդկանցից աւելի մասամբ կռապաշտներ են մասամբ էլ իսկական հեթանոսներ են: Վերոյիշեալ ստատիստիկան նոյնպէս առաջ է բերում մի զարմանալի փաստ, այն է, որ կաթոլիկ կրօնը, որ մի ժամանակ այնքան զօրեղ էր, այժմ ուրիշ քրիստոնեայ կրօններից աւելի ունի միայն չորս միլիոն հաւատացեալներ,

* * *

Ամենից պառաւ կինը Ֆրանսիայում: Մարիա Դիւբան, որը բնակվում է Օբէրնիէվ-անրօեանում (Իզերի) ի հարկէ, ամենից պառաւ կինն է Ֆրանսիական ամբողջ պետութեան մէջ: Նա ծնվեցաւ 1761 թվի մարտի 16-ին. 1783 թվին, դեկտեմբերի 30-ին նա պսակվեցաւ յայտնի Կլոդ Ժիրարի հետ և 96 տարի է արդէն, որ այրիացել է: Այդ պատուելի պառաւ կինը, ուրեմն այժմ 122 տարեկան է:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 սեպտեմբերի: Կառավարութեան առաջարկութեամբ Կայսերական ազատ-տնտեսական ընկերութիւնը հոկտեմբերին կը սկսի քննել գիւղատնտեսական գինեգործութեան զարգացման միջոցների և խմիչքների հարկի կանոնագրութեան մէջ հարկաւոր փոփոխութիւնների վերաբերեալ հարցերը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 սեպտեմբերի: Զինուորական բաժնին տուած հրամանով յայտնվում է, որ կուբանի կօղակ զօրքերին կից հիմնվում են 7 տեղական բաժիններ: „Journal de St. Petersbourg“ լրագիրը հաղորդում է, որ օտար լրագիրները շարունակ տարածում են անմիտ և դիտմամբ հնարված սուտ լուրեր Ռուսաստանի մասին: „Daily News“ լրագիրը պնդում է, որ Ս. Պետերբուրգի, Կոլպինի, Խարկովի և Սիմբիրսկի մէջ բազմաթիւ օֆիցերներ են կալանաւորված և մեծ քանակութեամբ դինամիտ է գտնված. „Pest. Iloyd“ լրագիրը Եկատերինօսլավի նահանգի մէջ մի կալուածքի կառավարչի սպանութիւնը դարձրել է գիւղացիների ապստամբութիւն հարաւային Ռուսաստանի մէջ: „Journal de St. Petersbourg“ պախարակում է օտար մամուլի այդպիսի ընթացքը, որը կոպէկական հաշիւների համար դիմում է գիտակցական ստութեանը: Սօբոլեվ և Կաուլբարս գեներալները հասան Ս. Պետերբուրգ: Երէկ առաւօտեան 7 ժամին Ցուրգենեվի մարմինը հասաւ Վերժբոլովո կայարանը, որտեղ եկեղեցում է դրված մինչև երկուշաբթի Ս. Պետերբուրգ ուղարկելու օրը: Եկեղեցու վանահայրը հոգեհանգիստ կատարեց: Դագաղի վրա դրված են արտասահմանեան և նախկին օրը շրջականերից ուղարկված պսակները: Ս. Պետերբուրգ մարմինը երեւի կը հասնի երեքշաբթի առաւօտեան 11 ժամին:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 25 սեպտեմբերի: Ազնուականների ժողովը բանալով, ազնուականների առաջնորդը ոտքի վրա կանգնած կարդաց թագաւոր Կայսրի այն խօսքերը, որ Նա թագադրութեան ժամանակ ուղղեց ազնուականներին: Ազնուականները այդ խօսքերը „ուրա“ աղաղակներով ընդունեցին և միաձայն վճռեցին թագաւոր Կայսրին մի ուղերձ ներկայացնել և յայտնել հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ:

ՆԻԿՈԼԱՅԵՎ, 25 սեպտեմբերի: Հոկտեմբերի 1-ին կայացաւ մատուռի հիմնադրութիւն ի յիշատակ ի Տէր Հանգուցեալ Կայսր Ալէքսանդր II-ի:

ԲԵՐԼԻՆ, 25 սեպտեմբերի: Ռուսաց դեսպան Սաբուրով վերադարձաւ արձակուրդից:

ՓԱՐԻԶ, 25 սեպտեմբերի: Սպանիական դեսպանը դիմեց Ֆրանսիական կառավարութեանը դժգոհութիւն յայտնելով Ալֆոնս թագաւորի դէմ ցոյցերի մասնակցողների չը պատժելու և նախագահ Գրէվիից Ալֆոնս թագաւորին տուած բացատրութիւնների բընագիրը պաշտօնական լրագրի մէջ չը տպելու առիթով:

Կ. ՊՕԼԻՍ, 25 սեպտեմբերի: Պաշտօնական շրջանները հաւատացնում են, որ լորդ Դիւֆֆերինին առանձին յանձնարարութիւններ չեն տուած:

ՐԵՎԵԼ, 25 սեպտեմբերի: Բազմաթիւ հրդեհներ գցելու մէջ դօրպատում մեղաւոր յայտնվեցաւ այնտեղի համալսարանի մի ուսանող, Ս. Պետերբուրգի բնակիչ: Հրդեհ գցողը կալանաւորված է:

ՊԵՇՏ, 25 սեպտեմբերի: Մայլօտին սպանող Սմանդօ, Պետելի և Բերեչ դատապարտված են մահուան պատժի, բայց երեքն էլ բողոքեցին այդ դատավճռի դէմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 37 կ., երկրորդ 93 ր. 75 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 93 ր. 75 կ., հինգերորդ 94 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 215 ր. 50 կ., երկրորդ 207 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 91 ր. 75 կ., ոսկի 8 ր. 33 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ $23^5/_8$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 202 մարկ, Փարիզի վրա $249^1/_4$ ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 սեպտեմբերի: Արտաքին գործերի մինիստրը արտասահման կուղևորվի ոչ վաղ Նոցա Կայսերական Մեծութիւնների վերադարձից: Զէնօվյի ընդհանուր հիւպատոսը տեղեկացնում է, որ ցորենի բերքը ամբողջ Իտալիայում որոշվում է 89 պրոցէնտ, իսկ եգիպտացորենի բերքը 93 պրոցէնտ միջին պտղաբերութեան. այդ հաշիվով կը ստացվի՝ ցորեն 45, իսկ եգիպտացորեն 99 միլիոն հեկտոլիտր: Հարաւային նահանգներում անասունի ժանտախտ յայտնվելու պատճառով, մեր չէրնոմորեան նաւահանգիստներից անասուններ թիւրքաց նաւահանգիստներ տանելը արգելված է: Ցուրգենեվի մարմինը Ս. Պետերբուրգ կը հասնի սեպտեմբերի 27-ին առաւօտեան 10 ժամ և 20 րոպէին. յուղարկաւորութեանը մասնակցում են 176 պատգամաւորութիւններ, որոնց թիւում մայրաքաղաքների բոլոր և գաւառական շատ ուսումնարանների կողմից, գիտական ընկերութիւններից, կայսերական թատրոնների արտիստներից, մայրաքաղաքների և գաւառական լրագիրների խմբագրութիւններից և գերմանական լրագիրների թղթակիցներից: Ամենից առաջ կերթան Ցուրգենեվի նախկին գիւղացիները, իսկ ամենից վերջ կերթան Ս. Պետերբուրգի ազնուականութեան առաջնորդը, պատգամաւորութիւններ՝ գիտութիւնների ակադեմիայի և Մոսկվայի ու Պետերբուրգի դումաների կողմից: Այսօր առաջին անգամ ձիւն եկաւ, մէկ աստիճան սառնամանիք է: „Новое Время“ լրագիրը ասում է, որ նախագծված Ամուրեան գեներալ-նահանգապետութեան կենտրոնը դեռ ևս չէ ընտրված. մի քանիսները կարծում են, որ այդ կենտրոնը պէտք է լինի Վլադիվոստոկում, իսկ ուրիշները կարծում են, որ դա լինելու է Բլագովեշչենսկում: Նոյն լրագիրը հաղորդում է, որ ավգանցիները գրաւեցին Շուգնան, Ամու-Դարիայի ակունքներում Ֆերգանայի մօտ: Այդպիսով Ավգանական սահմանը մօտեցրած է անմիջապէս մեր սահմանին:

ՓԱՐԻԶ, 25 սեպտեմբերի: Գլխաւոր հրամանատարը Տօնկինում, ծովապետ Կուրբէ հեռագրեց, որ ճանապարհների փոտ դրութեան պատճառով, յարձակողական գործողութիւնները կանգնեցրած են. բայց գրաւած կէտերը զօրքերին հնարաւորութիւն են տալի կատարեալ ապահովութեամբ սպասել խոստացված ամրութիւններին:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 25 սեպտեմբերի: Թագաւոր Կայսրը Ուէլսի իշխանի հետ միասին վաղը որսի են գնում շվեդական կոմս Ցօրներգիելմի մօտ:

ՍՕՖԻԱ, 25 սեպտեմբերի: Ցանկով ազգային ժողովում կարդաց մինիստրութեան պրոգրամա և յայտնեց, որ կաբինէտը վերականգնված սահմանադրութեան հետ օրինական համաձայնութեան մէջ է գտնվում: պրոգրաման ծափահարութիւններով ընդունվեցաւ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի հայ պատանի ցանկանում է մի ընտանիքում բնակարան և անուղղ ստանալ, որի փոխարէն որոշեալ ժամերում նա կը պարապի տան երեխաների հետ հայոց և ռուսաց լեզուներով, այլ և զանազան առարկաներով: Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատանը: 1—10

Սուրբ Նշան եկեղեցւոյ անուամբ բացվում է հայ օրիորդաց ծխական ուսումնարան, որ կը լինի „Հայաւհեայ Բարեգործական ընկերութեան“ հսկողութեան տակ:

Ցանկացողք տալ իրանց աղջկանց այդ ուսումնարանը կարող են դիմել տ. Սրբուհի Երիցեանին, Անչիխասի փողոց, սեպհական տանը, ամենայն օր, ժամը երկուսից յետոյ: 2—3

Ներկայ դպրոցական տարուայ սկզբից Շամքոռեցւոյ եկեղեցւոյ ծխական դպրոցը ժամանակաւորապէս տեղափոխված է պ. Ց. Տէր Ղազարեանի տանը Հաւլաբարի հրապարակի մօտ՝ Արիանգելսկի փողոցի վրայ № 10: Աշակերտների ընդունելութիւնը կը տևի մինչև ամսոյս վերջը:

Ուս. դպրոցի՝ Գ. Մատինեանց 5—5

Խնդրում եմ այն պարոններին, որոնք յանձն են առել անցեալ տարի վաճառելու գաւառներում պ. Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ „ԱՆԱՀԻՏ“ անունով գիրքը, թող բարեհաճեն, մինչև ներկայ տարվայ հոկտեմբերի վերջը ուղարկել դրամները կամ մնացած անվաճառ գրքերը իմ հասցէով՝

Տպարանատէր Մ. Վարդանեանց: 3—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Հեռևեալ մէկ արարուածով կատակերգութիւնները.

Էլ չարէս ինչ կամ երկու սիրահար	35 կ.
Մօդա	40 »
Կռուապատճառը ես էի	55 »
Խէչոյի թուղը	35 »
Սէր կամ մահ	35 »

Դիմել. ԷՐԻՎԱՆ, Эмину Теръ-Григорянцу. 4—10

КЁЛЕРСКАЯ УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.

37—50

ЖЕСТЯНКА 20 ЧАШЕКЪ 1 РУБ.

Этикетъ утвержденъ Правительствомъ. Подделка будетъ преслѣдуема строго закономъ.

ПРИ ТРЕБ. ПОЧТОЙ ПРИЛАГАТЬ НА ОТПРАВКУ.

(5. 10. 25) 14—24

ԱՌԱՋԻՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻՍ, ՎԱՐԱՆՑՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԷՊ)

ՀԻՒԱՆԴԱՆԵՐԸ ԱՄԵՆ ՕՐ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ:

ՀԱՄԱԽՈՐՀՈՒՐԴ, (կոնսիլիում) Հիւանդանոցի բոլոր բժիշկների չորեքշաբթի և շաբաթ երեկոյեան $6^1/_2$—$7^1/_2$ ժամը:—Հիւանդանոցի բժիշկները՝ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ, ՐՈՒԴԿՕՎՍԿԻ, ՍԱՐՕԿԻՆԱ—ՇՁԵՐԲԻՆԻՆԱ, ՐԷՑԻ և ԲԱԲԱՑԵԱՆ:

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա:



Միակ գործակալ ԼԻԱԿԱՆ Խ տեղը կան ամեն ի համար մեծ ԳՐԻՉՆԵՐ էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱՔ, ներ, զմուռ, ՄԱ րիչներ, պենալ, ներ, ծխախոտի ՆԵՐ, ածելիք, ս ներ, ԲԱԶԿԱԹՈՌ- ղարկու կախելու ՏԻՆԵՐ, վզագօտ- ՐԱՆՆԵՐ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, Ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօակագլխի, երկաթէ թելերից, ձիու համար: Մակենաօշներ: Բժշկական թուղթ վատերկլօզոտի համար և այլն և այլն:

ԼՈՒԹԻՒՆ ԱՆԳԱՆՈՒԹ: Նոյն տեսակ ձեռագրեքանակութեամբ ամեն ձեի 25% ուրիշ տեղ: կան թուղթ, տետրակներ, քարեգրգզակոթ, քսակամաններ, մկրատրոցներ, խալիչամուհձակալ, վեհամար իրեր, գօներ, մատուցարաններ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, Ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօակագլխի, երկաթէ թելերից, ձիու համար: Մակենաօշներ: Բժշկական թուղթ վատերկլօզոտի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ: 47—100

ԵՐԿԱԹԷ



ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ

Մի հոգու համար 8 ռուբլուց, երկու հոգու համար 14 ռ., մահիճներ ծովային խոտով լցված 6—9 ռ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատառաքաղներ և երկաթէ ԳՐԻՉՆԵՐ, կողպէքներ, թերիվ, ոգամարդկերանց և կանանց ԹԱՄԲԵՐ, մատուցարաններ, ԿԼԷՕՆԿԱ, րէվոլվերներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալբօմներ, կոնֆեկտներ, թէց 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ: 92—100

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ է Երևանեան հրապարակի վրա „Կովկաս“ հիւրանոցի տակ վարշավայի և արտասահմանի ԿՕՇԻԿՆԵՐԻ և դալանտերէյնի ապրանքների խանութ: ԱՐՏԵՄ Մ. ՉԱՓԱՐՕՎ 2—3 (1)

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Գ. Մ. ԼԷԲԷԴԻՆՍԿԻ

Տեղափոխվեց Սօլօլակսկայա փողոց, Սպանդարեանի տունը № 12, կալուածական բանկի դիմաց: 2—10 (2)

LIBRAIRIE BAERENSTAM TIFLIS.

LA MINGRÉLIE

PAR

J. MOURIER.

Cet ouvrage de luxe, tiré seulement à cent exemplaires, formera un volume in—16, de 450 pages et contiendra des cartes, des chromolithographies et 80 gravures.

Les deux premiéres livraisons ont paru.

PRIX: 10 ROUBLES. 1—3

L'ART AU CAUCASE

PAR

J. MOURIER.

Cet ouvrage in-folio formera environ trente livraisons illustrées contenant des gravures sur bois, des lithographies, des photogravures, des chromolithographies.

PRIX: 25 ROUBLES.

Les 10 premières livraisons ont paru.

Comme pour toutes les éditions de luxe, le tirage de cet ouvrage étant très limité, on souscrit chez M. Schaverdow et Baerenstam libraires à Tiflis. 1—3

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԲՕԶԱՐՋԵԱՆՑԻ ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ ՏՓԽԻՍՈՒՄ

Նոր ստացել եմ ՏԱՃԿԱՍՏԱՆԻՑ ամենալաւ ԿԷՕԲԷԿ և զանազան տեսակ ՀՈՏԱՒԷՏ ԾԽԱԽՈՏՆԵՐ:

Պատուէրները զանազան գների ծխախոտ և պապիրոսներ պատրաստելու համար ընդունում եմ ՍԵՓԱԿԱՆ ծխախոտի ՎԱՃԱՌԱՏԱՆՍ մէջ, որ գտնվում է Դվորցովայա փողոցում, ԱՐԾՐՈՒՆՈՒ տան մէջ № 1 և խոստանում եմ պատուիրողի ճաշակի համեմատ ԾԽԱԽՈՏ և պապիրոսներ պատրաստել ընդ միշտ:

Սորա հետ միատեղ շնորհ ունեմ յայտնել յարգոյ հասարակութեան և խնդրել խնայարհարար մանաւանդ իմ գործարանի ծխախոտեղէնների պ. պ. գնողներից, զանազան վաճառատներում այնպիսիները գնելու ժամանակ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՆԵԼ փաթեթների վրա և կարդալ ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ազգանունը մինչև նոցա փոփոխումը, որոյ մասին իւր ժամանակին կը յայտնեմ, որովհետև մի քանիսը տեղոյս գործարանատէրերից, չը նայելով փաթեթների վեցերորդ անգամ փոփոխութեանը, այնու ամենայնիւ յետ չեն կենում նոցա ԿԵՂԾԸ շինելուց: 1—1

Դուրս եկաւ մամուլի տակից ԴՐ. ԱՒԵՏԻՔ ԱՐԱՄԽԱՆԵԱՆՑԻ քաղաքատնտեսական դասախօսութիւնների առաջին տետրը

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ և ԱԶԳԱԲՆԱԿՉԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Գինն է 40 կոպէկ:

Ցանկացողները թող բարեհաճեն ստորագրուել ԲՈԼՈՐ ԵՕԹԸ դասախօսութիւններին, վճարելով միայն 1 ռ. 50 կ.:

Դիմել ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ և ԿՈՎԿԱՍԵԱՆ գրավաճառանոցները և „ՄՇԱԿԻ“ խմբագրութեանը:

10—10 (1)

Գիւղատնտեսական մեքենաների մասնագէտ

ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆՑ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Բերել եմ տալիս և սարքում եմ գութաններ, ցանելու, հնձելու, կալսելու և դարման շինելու մեքենաները, շոգեշարժ ջաղացներ և ձիթահաններ, հանում եմ առուներ և սարքում եմ զանազան տեսակ ջուր բարձրացնող մեքենաներ: Զը գիտեցողներին սովորեցնում եմ նոցա բանեցնելու կերպը:

Պատկերազարդ ցուցակս մեքենաների ուղարկում եմ ցանկացողներին ձրի:

Դիմել այս հասցէով՝ Въ Вагаршапатъ, въ контору Эчміадзинской Паровой Маслобойни.

Л. Е. Ханъ-Агову. 3—6

ԼԱՎԳԱՅԻ ԱՊԱԿԻՆԵՐ

„ԱԼԷՔՍԱՆԴՐԳԻՒՏԷ“

Ապակէ գործարանից ծախվում են մեծ քանակութեամբ էժան գներով: ՍԻՄԵՆՍԻ և ՀԱԼՍԿԷԻ դրասենեակ: 4—5 (2)

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Сентября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.